Հավելված
Գորիս համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 17-ի
N 117-Ա որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Գորիս համայնքում (այսուհետ՝ համայնք), սոցիալական ծառայությունների ոլորտում համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, սոցիալական ծառայություններ մատուցելու կարգավորումները, մասնակցային սոցիալական ծառայությունների ներդրման գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարը կողմից գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը:

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես խոցելի տարբեր խմբերին տրամադրվող սոցիալական ծառայությունների բարելավման և մասնակցային ծառայությունների ներդրման համար մասնակցային պլանավորման և սոցիալական ներառման գործընթացն ապահովող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

3. Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել՝

1) համայնքի ավագանուց՝ մինչև երկու անդամ,
2) սոցիալական աշխատողներից՝ մինչև երկու անդամ,
3) համայնքապետարանի աշխատակազմից՝ մինչև երկու անդամ,
4) համայնքային ենթակայության կազմակերպություններից՝ մինչև երկու անդամ,
5) համայնքում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններից՝ մինչև 5 անդամ,
6) համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների ներկայացուցիչներից՝ մինչև երեք անդամ
7) համայնքի բնակիչ հանդիսացող, սոցիալական ծառայություններ ստացող շահագրգիռ անձանցից՝ մինչև չորս անդամ:

4. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչները և տեղական իշխանությունները, ի դեմս սույն Հանձնաժողովի, համատեղ ստեղծում են համայնքահեն սոցիալական ծառայությունների մասնակցային պլանավորման և մատուցման կայուն մեխանիզմ՝ համաձայն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և համայնքապետարանի առաջնահերթությունների:

5. Սույն Հանձնաժողովում ընդգրկվելու հնարավորություն ունեն բոլոր նրանք, ովքեր այս կամ այն փուլում, տեղական և պետական կառավարման (ՏՊԿ) մակարդակում, ներգրավված են բնակչության խոցելի խմբերին սոցիալական ծառայությունների ոլորտում հանրային քաղաքականության պլանավորման և իրագեկման գործընթացներում:

6. Հանձնաժողովի ձևավորման մասին հայտարարությունը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից տեղադրվում է համայնքի պաշտոնական կայքում և փակցվում է համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:

7. Հայտարարությունը հրապարակվելուց հետո 10 օրվա ընթացքում, հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ անձինք կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ:

8. Հայտարարության ժամկետը բաց թողնելուց հետո, ստացված դիմումները համայնքապետարանի կողմից ենթակա չեն ընդունման և քննարկման:

9. Հանձնաժողովի նախագահն ընտրվում է մասնակցային տարբերակով՝ անդամների ընդհանուր քվեարկության արդյունքում:

10. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է սահմանված ընթացակարգերին համապատասխան և նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Նիստերի հաճախականությունը որոշվում է հանձնաժողովի անդամների կողմից՝ ելնելով անհրաժեշտությունից:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ)

11. Հանձնաժողովի գործունեությունն ուղղված է համայնքում ընտանիքների ու անհատների՝ որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնմանը, աջակցմանը, ռիսկերի կառավարմանը՝ դրանց կարգավորման ու նվազեցմանը: Հանձնաժողովը, համախմբելով տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական և տարածքային կառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ մատուցողներին, սոցիալական ծառայություններից օգտվողներին, քաղաքացիական հասարակության դերակատարներին, աջակցում է համայնքի կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների բարելավմանը, աղքատության կրճատմանը, սոցիալական ներառմանն ուղղված մասնակցային գործընթացներին:

12. Հանձնաժողովը կարող է իրականացնել միջոցառումներ և գործառույթներ, որոնք ուղղված են՝

1) համայնքի կարիքների հիման վրա՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացին.

2) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական կարիքների կամ դրանցից ցանկացածի հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների մշակմանը, առաջարկությունների ներկայացմանը, համայնքում սոցիալական աջակցության տրամադրման բարենպաստ միջավայրի ստեղծմանը.

3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն ուղղված ծառայությունների մշակմանը, կարգավորմանը.

4) թիրախ համայնքի բոլոր բնակավայրերում, ըստ ծառայությունների, թիրախների ընտրության չափորոշիչների մշակմանը, կարիքների գնահատման համար տեղեկատվության փոխանակմանը, (խնդիրների) ռիսկերի բացահայտմանը, ուղղորդմանը.

5) համայնքային հանդիպումների, քննարկումների, տեղեկատվական միջոցառումների իրականացմանը.

6) սոցիալական նշանակության ծրագրերի հասանելիության, հասցեականության և տեսանելիության բարձրացմանը.

7) տեղական սոցիալական ծրագրերի կանոնավոր և պարբերական մոնիտորինգների իրականացմանը.

8) համայնքում մատուցվող սոցիալական աջակցության ծառայությունների կայունությանը, այդ թվում՝ սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների հավաստագրման գործընթացի աջակցմանը.

9) մշակված տեղական սոցիալական ծառայությունների ֆինանսավորման աղբյուրների բացահայտմանը.

10) խորհրդատվական աջակցության տրամադրմանը համայնքահեն սոցիալական ծառայությունների մասնակցային պլանավորմանն ու մատուցմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի առաջարկների գնահատման և ընտրության գործընթացներին:

13. Հանձնաժողովի գործունեության շրջանակը բավականին լայն է: Երբեմն այն կարող է կենտրոնանալ միայն որոշակի թիրախային խմբի համար: Սակայն, ընդհանուր առմամբ, Հանձնաժողովի գործառույթները պետք է տարածվեն ամբողջ համայնքի վրա (խոցելի իրավիճակներում գտնվող բոլոր խմբերի վրա) և ընդգրկեն ծառայությունների լայն տեսականի:

14. Հանձնաժողովը պետք է դիտակետում պահի բոլոր թիրախային (ռիսկային) խմբերը, մասնավորապես՝

- Տարեցներին, հատկապես՝ միայնակ ապրող.
- Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքներին

- Երեխաներին և երիտասարդներին (հատկապես հաշմանդամություն ունեցող կամ ռիսկային խմբում գտնվողներին)
- Միգրանտներին/ներգաղթյալներին, տեղահանված մարդկանց
- Ճգնաժամի մեջ գտնվող մարդկանց՝ անօթևաններին և այլն
- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց
- Տարատեսակ կախվածություններ ունեցող մարդկանց:

15. Հանձնաժողովը պետք է հիմնականում կենտրոնացած լինի սոցիալական ծառայությունների պլանավորման և բարելավման վրա:

16. Հանձնաժողովը պետք է պլանավորի սոցիալական ծառայությունների լայն շրջանակ և աջակցի տարբեր խմբերի (հիմնականում՝ խոցելի և անբարենպաստ իրավիճակներում/պայմաններում գտնվողների) կյանքի որակի, սոցիալական բարեկեցության և սոցիալական ներառման բարելավմանը:

17. Այս ծառայությունները կարող են մատուցվել ինչպես համայնքային և/կամ պետական կառույցների, այդպես էլ մասնավոր կազմակերպությունների կամ շահույթ չհետապնդող ոչ կառավարական կազմակերպությունների կողմից:

18. Սոցիալական ծառայությունները բնակիչներին մատուցվող բոլոր հանրային ծառայությունների ընդամենը մի մասն են: Հանձնաժողովը պետք է աջակցի նաև մի շարք այլ հարակից (հանրային) ծառայությունների և քաղաքականությունների բարելավմանը, որոնք ազդում են մարդկանց առօրյա կյանքի որակի վրա: Օրինակ, կրթության որակը, հասարակական տրանսպորտը, տարածքային պլանավորումը, անվտանգության խնդիրները և բնակարանային քաղաքականությունը, որոնք կարող են էականորեն ազդել նաև թիրախային/խոցելի խմբերի կյանքի որակի վրա:

19. Ուստի Հանձնաժողովի պլանավորման գործընթացը չպետք է սահմանափակվի միայն սոցիալական ծառայություններով: Հանրային այլ ծառայություններ նույնպես պետք է պլանավորվեն միասին/մասնակցային:

20. Հանձնաժողովի գործունեությունը պետք է համատեղելի/համահունչ լինի արդեն իսկ գոյություն ունեցող այլ պլանավորման գործընթացների հետ, օրինակ՝ ՏԱՊ-ի կամ համայնքի 5-ամյա զարգացման ծրագրի հետ, որպեսզի ապահովի պլանավորած ծառայությունների իրագործելիությունը: